ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՑԻ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԻՑ)

Սրանից ուղիղ 25 տարիներ առաջ, 1956 թուականին, հրատարակել էինք մեր «Դիտողութիւններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրութեան վերաբերեալ» յօդուածը («Էջմիածին» ամսագիր, 1956, №№ 8-9 եւ 11-12), որում հայոց այդ նշանաւոր հայրապետի կեանքին ու գործունէութեանը վերաբերող սակաւաթիւ աղբիւրների օգտագործմամբ ու քննական վերլուծութեան ուղիով առաջ էինք քաշել մի շարք հարցեր: Մեր եզրակացութիւնները յանգում էին հիմնականում երկու կէտերի. 1. Ստեփանոս Սալմաստեցին 1551 կամ 1552 թուականներին չի մահացել Լուովում, այլ յիշատակուում է ինչպէս 50-ական, այնպէս եւ 60-ական թուականներին. 2. Լուովի հայոց մայր տաճարում գտնուող եւ նրա անունը կրող «տապանաքարն» ու արձանագրութիւնը կեղծ են:

Մեր այդ յօդուածը առիթ էր տուել, որ Հռոմի Լեւոնեան վարժարանի սաներից Գերյ. Գրիգոր վրդ. Պետրովիչը նոյն հարցերին նուիրուած՝ հայերէն մի ուսումնասիրութեամբ, որը կրում էր «Ստեփանոս Ե. Սալմաստեցի, կաթողիկոս Էջմիածնի» խորագիրը, հանդէս գար նախ «Բազմավէպ» ամսագրի 1962-1963 թթ. համարներում (յետոյ նաև առանձին գրքոյկ՝ Վենետիկ, 1964), իսկ աւելի ուշ՝ անդրադառնար նաև իր «Հայ Եկեղեցին Լեհաստանում» իտալերէն աշխատութեան մէջ (Հռոմ, 1971):

Պէտք է ասել, որ Սալմաստեցու կապակցութեամբ Գրիգոր վրդ. Պետրովիչի կատարած աշխատանքը, անկախ իր ներկայացրած գաղափարական դարտուղութիւնից, շատ նշանակալից ու կարեւոր ներդրում էր Ստեփանոս Սալմաստեցուն նուիրուած ուսումնասիրութիւնների բնագաւառում: Պետրովիչը հրապարակ էր գալիս օտարալեզու այնպիսի աղբիւրներով, որոնք ուշադրութիւն էին դրաւում թէ՛ իրենց քանակով եւ թէ՛ մեզ հետաքրքրող հարցերի վերաբերեալ պարունակած նոր նիւթերով ու լուսաբանող նոր տուեալներով: Որպէս մասնագէտ՝ մենք մեծ հաճոյքով դիմաւորեցինք այդ երեւոյթը, նկատի ունենալով, որ Ստեփանոս Սալմաստեցու ուսումնասիրումը, որպէս առարկայ, կապուած է լեհական-լատինական միջավայրի հետ եւ հետեւաբար Պետրովիչի նշած լեհերէն եւ լատիներէն աղբիւրներն ու մենագրութիւնները անսահմանօրէն կարեւոր նշանակութիւն ունեն այս գործում: Այդ ժամանակներից՝ մենք հետամուտ ենք եղել ամէն գնով ձեռք բերելու այդ նոր նիւթերը, որոնուններ կատարելով մեծ կենտրոններում՝ Մոսկուայում, Լենինգրադում, Հռոմում, Լոս Անջելոսում, ու Երուսաղէմում, ինչպէս նաև միջգրադարանային կապերի միջոցով Լուովում, Կիեւում եւ այլ վայրերում. եւ մեզ յաջողուել է բաւական բան ձեռք բերել այդ միջոցներով: Պետրովիչի հրատարակութիւնների շնորհիւ է, որ նոր ուղիներ են յայտնուել մեզ՝ մեր հետազօտութիւնների համար:

Յատուկ շնորհակալութեամբ այստեղ յայտնենք, որ Գրիգոր վրդ. Պետրովիչը 1978 թ. գարնանը Հռոմում մեծ սիրալիրութեամբ օժանդակեց մեզ՝ կապեր ստեղծելու տեղի գիտական հաստատութիւնների հետ, ինչպէս, օրինակ, Լեհաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Հռոմի կայանի հետ, ինչպէս եւ բարութիւն ունեցաւ իր հաւաքած անտիպ նիւթերից մեզ նուիրելու մի կարեւոր էջ՝ լատիներէն բնագրի լուսանկարով եւ իր կողմից կատարուած վերծանմամբ ու իտալերէն թարգմանութեամբ (Bibliotheca Vaticana, Cod. Vat. Lat. № 12561, որ է J. E. Minasowicz-ի «Memorabilia» աշխատութիւնը):

Տարիների ընթացքում հաւաքուած նիւթերի հիման վրայ՝ մենք գրում ենք Ստեփանոս Սալմաստեցուն նուիրուած համապարփակ մի ուսումնասիրութիւն, որի տարբեր մասերից այսօր, որպէս նմուշ, հրատարակութեան ենք տալիս մի քանի առանձին հատուածներ, որոնք անմիջական կապ չունեն իրար հետ:

Ստորև օգտագործում ենք հետեւեալ երկու յապաւումները.

ՊՍՍ = Գրիգոր Վրդ. Պետրովիչ: Ստեփանոս Ե. Սալմասեցի, Կաթողիկոս Էջմիածնի (1543-1552): Վենետիկ, 1964:

PChA = Gregorio Petrowicz. La Chiesa Armena in Polonia. Parte prima 1350-1624. Istituto degli Studi Ecclesiastici, Roma, 1971.